**«Թափուր աշխատատեղերի տնավաճառի կազմակերպում»** ծրագրով իրականացվել է 7 տնավաճառ՝ Հրազդան, Իջևան, Վանաձոր, Գյումրի, Արտաշատ, Գորիս և Երևան (սիրիահայերի համար) քաղաքներում, որոնց մասնակցել է 247 գործատու, 9450 աշխատանք փնտրող և ներկայացվել է 1353 թափուր աշխատատեղ և կանխատեսվող ևս 908 աշխատատեղ: Արդյունքում, տնավաճառների ավարտից հետո 3 ամիսների ընթացքում աշխատանքի է տեղավորվել շուրջ 414 անձ:

**«Հետազոտական աշխատանքներ»** ծրագրով իրականացվել է «Գործատուների ընտրանքային հետազոտություն» թեմայով ուսումնասիրություն, որի նպատակն էր գործատուների շրջանում իրականացվող ուսումնասիրության միջոցով գնահատել տնտեսության մեջ և աշխատաշուկայում տեղի ունեցող փոփոխությունները նախորդ և առաջիկա 3 տարիների կտրվածքով և կանխատեսվող մասնագիտականներն ըստ ոլորտների:

Ջրաղվածության կենտրոններում ստեղծված 16 աշխատանքային ակումբներում 2012թ. ընթացքում իրականացվել է 88 խմբային աշխատանք՝ 817 աշխատանք փնտրողի ընդգրկվածությամբ, որից 215-ը տեղավորվել է աշխատանքի, իսկ 239-ը ընդգրկվել է զբաղվածության կարգավորման 2012թ. պետական ծրագրերում:

#### **Միջազգային համագործակցություն.**

ԱՄՆ ՄԶԿ-ն գործակալության հետ համատեղ 2012թ.-ից իրականացվում է «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավումը զբաղվածության խթանման միջոցով» (LIFE) ծրագիրը: Ծրագրի շրջանակներում «Save the children» կազմակերպության Հայաստանի գրասենյակն իր գործընկեր կազմակերպությունների հետ անցկացրել է գործակալության 2 աշխատակիցների և 10 ավագ վերապատրաստողների համար սեմինար-վերապատրաստումներ:

ԱՄԿ-ի հետ համատեղ իրականացվում է՝

- «Միգրանտ աշխատողների պաշտպանությունը ՌԴ-ում և միգրացիայի դրական ազդեցության ընդլայնումը Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում» ծրագիրը,
- շարունակվում է ԱՄԿ-ի «Ճգնաժամից դեպի ապահով և արժանապատիվ աշխատանք» ծրագիրը, որի նպատակը հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության աջակցությունն է:

ՄԱԿ-ի Հայաստանի գրասենյակի հետ համատեղ «Մասնագիտական կրթություն և ուսուցում (ՄԿՈՒ)» ծրագրի շրջանակներում իրականացվել է «Մասնագիտական ուսուցում և կրթություն» ծրագիրը, որի շրջանակներում տարեկազմից պայմանագրեր են կնքվել 35 կազմակերպությունների հետ 266 աշխատանք փնտրողի մասնագիտական ուսուցման դասընթացները կազմակերպելու համար: Ծրագրի շրջանակներում պայմանագրեր են կնքվել նաև 37 գործատուների հետ գյուղաբնակ և մասնագիտական աշխատանքային փորձ չունեցող երիտասարդների աշխատանքային պրակտիկան կազմակերպելու համար:

ՄԱԿ-ի փախստականների գծով Գերագույն հանձնակատարի գրասենյակի հետ կնքված հուշագրի համաձայն, պայմանագրեր են կնքվել 13 կազմակերպության հետ և իրականացվել է 56 փախստականի կարգավիճակ ունեցող կամ նախկին փախստական անձանց մասնագիտական ուսուցման ծրագրեր:

#### **2. Կենսաթոշակային ապահովություն**

Կենսաթոշակային ապահովության բնագավառը կանոնակարգելու նպատակով մշակվել է 2012թ. ուժի մեջ են մտել մի շարք իրավական ակտեր, այդ թվում՝

- 1) 2012թ. մարտի 19-ին ընդունված «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը,
  - 2) ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 1734-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 1860-Ն որոշումը,
  - 3) ՀՀ կառավարության 2012թ. օգոստոսի 16-ի «ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 665-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N 1084-Ն որոշումը,
  - 4) ՀՀ կառավարության 2012թ. սեպտեմբերի 20-ի «ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 668-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N 1238-Ն որոշումը,
  - 5) ՀՀ կառավարության 2012թ. դեկտեմբերի 20-ի «ՀՀ կառավարության մի շարք որոշումներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N 1627-Ն որոշումը,
- ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 1734-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 1860-Ն որոշման համաձայն, 2012թ. հունվարի 1-ից հիմնական կենսաթոշակի չափը սահմանվել է 13000 դրամ՝ նախկին 10500 դրամի փոխարեն:



2012թ. համակարգում հաշվառված կենսաթոշակատուների թիվը կազմել է 508071 անձ, իսկ միջին կենսաթոշակի չափը՝ 29688 դրամ, միջին աշխատանքային կենսաթոշակի չափը կազմել է 31248 դրամ (աճը՝ 8.9%), միջին սոցիալական կենսաթոշակի չափը կազմել է 16236 դրամ (աճը՝ 23 %):

**2012թ. կենսաթոշակային ապահովության բնագավառի հիմնական առաջնահերթությունը եղել է կենսաթոշակային բարեփոխումների իրականացումը:**

Ըստ այդմ, շարունակական բնույթ են կրել կենսաթոշակային բարեփոխումների իրականացումն ապահովող իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքները ի կատարումն ՀՀ կառավարության 2008թ. նոյեմբերի 13-ի N 1487-Ն որոշման և ՀՀ վարչապետի 2011թ. փետրվարի 16-ի N 113-Ա որոշման:

Շարունակական բնույթ են կրել նաև պետական կենսաթոշակային ապահովության ոլորտի նոր տեղեկատվական շտեմարանի ներդրման ուղղությամբ կատարվող աշխատանքները:

Աշխատանքներ են տարվել նաև եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարի անձնավորված հաշվառման համակարգի ներդրման ուղղությամբ:

Իրականացված աշխատանքների արդյունքում՝ 2013թ. հունվարի 1-ից գործարկվեց վերը նշված համակարգի եկամտային հարկի հավաքագրումն ապահովող մասը, որի շրջանակներում գործատուները հաշվետվությունները ներկայացնում են բացառապես էլեկտրոնային եղանակով:

Շարունակական բնույթ են կրել նաև կենսաթոշակային ապահովության ոլորտի տեղեկատվական ենթակառուցվածքը զարգացնելու ուղղությամբ կատարվող աշխատանքները: Մասնավորապես, լրամշակվել են համակարգի առանձին մոդուլներ ամբողջությամբ ավտոմատացնելով որոշումների կայացման գործընթացը:

**3. Սոցիալական աջակցություն**

**Պետական նպաստների (դրամական օգնության) բնագավառ.** Պետական նպաստները նշանակվում և վճարվում են «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույթներին համապատասխան՝ որպես «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված դրամական օգնության առանձին ձև:

Պետական նպաստների նշանակման և վճարման կարգերն ու առանձնահատկությունները, ինչպես նաև չափը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Պետական նպաստների՝ ընտանեկան նպաստ, երեխայի խնամքի նպաստ, երեխայի ծննդյան միանվագ նպաստ, զոհված՝ Հայաստանի ազգային հերոսի, ինչպես նաև Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձի ընտանիքի նպաստի նշանակման և վճարման գործընթացն իրականացնում են սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինները (այսուհետ՝ ՄՕՏՄ), որոնք պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի առանձնացված ստորաբաժանում են (այսուհետ՝ տարածքային մարմին):

Պետական նպաստների համակարգը՝ որպես ծայրահեղ աղքատության հաղթահարման գործիք, կարիք ունի վերափոխման՝ ընդհանուր արքայության կրճատման խնդիրների լուծման և կայուն ընտանիքների ձևավորմանն օժանդակելու համար: Սոցիալական քաղաքականությունն ուղղվելու է սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերից բնակչության արտագաղթի կանխմանը, այդ բնակավայրերի բնակչության սոցիալական ակտիվության բարձրացմանը, որը կհանգեցնի սոցիալական անտարբերության նվազմանը:

**Ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն**

Ընտանեկան նպաստի ծրագիրը կոչված է աջակցելու աղքատ ընտանիքներին: Ընտանեկան նպաստի ծրագրի հասցեականության մեծացման հարցը մշտապես դիտարկվել է որպես սոցիալական աջակցության ոլորտի մարտահրավեր և դրան հասնելու նպատակով իրականացվող միջոցառումները հիմնականում իրականացվել են 4 ուղղությամբ՝ ընտանիքների անապահովության գնահատման կարգի փոփոխություն, որը հիմնվում է տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջական հետազոտության տվյալների վրա, վարչարարության բարելավում և տարածքային մարմինների աշխատողների վերապատրաստում և բնակչության իրազեկում:

Ընտանեկան նպաստի համակարգում իրականացված բարեփոխումներն իրականացվել են ԱՀՌԾ և ԿԶՄ սահմանած ռազմավարական ուղղություններին, ՀՀ ԱԿՄ ամենամյա տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների տվյալներին համապատասխան՝ փոփոխելով ընտանիքների անապահովության գնահատման կարգը:

Ընտանեկան նպաստի իրավունքը որոշվում է ընտանիքի անապահովության միավորով, որը որոշվում է ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի N 2317-Ն որոշմամբ հաստատված ընտանիքի անապահովության գնահատման կարգով: Համաձայն այդ կարգի ընտանիքի (տնային տնտեսության) անապահովության աստիճանը գնահատելու նպատակով հաշվի են առնվում աղքատությունը բնութագրող անուղղակի ցուցանիշներ՝ ընտանիքի յուրաքանչյուր անդամի սոցիալական խումբը, ընտանիքում անաշխատունակ անդամների թիվը, բնակավայրը, ընտանիքի բնակարանային պայմանները, ընտանիքի միջին ամսական եկամուտը և այլն:

Վերոհիշյալ յուրաքանչյուր ցուցանիշ ունի իր թվային արժեքը, որոնց արտադրյալով որոշվում է ընտանիքի անապահովության միավորը:

Որքան մեծ է այդ միավորն այնքան անապահով է համարվում այդ ընտանիքը:

Ընտանիքի միջին ամսական ամբողջական եկամտի կազմի մեջ մտնում են ընտանիքի անդամների աշխատանքի վարձատրությանն ուղղված հաշվարկված, վճարման ենթակա միջոցները և դրանց հավասարեցված եկամուտները, կենսաթոշակը, գործազուրկության, մինչև երկու տարեկան երեխայի խնամքի, զոհված՝ Հայաստանի ազգային հերոսի կամ Մարտական խաչ շքանշանով հետմահու պարգևատրված անձի ընտանիքի նպաստի կարգի, դրամական օգնությունները՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. մայիսի 5-ի «Զինծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին տրվող ամենամյա դրամական օգնության չափերը ըստ դրամական օգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց կատեգորիաների, դրամական օգնություն նշանակելու և վճարելու կարգը սահմանելու մասին» N 668-Ն որոշման, ինչպես նաև անասնապահությունից և հողօգտագործումից ստացվող եկամուտը:

2012թ. համար ընտանեկան նպաստի իրավունքի ճանաչման սահմանային միավորը սահմանվել է «30.00» միավոր:

ՀՀ կառավարության վարած քաղաքականության հիմնական առաջնահերթությունը, ինչպես նախորդ տարիներին, 2012թ. նույնպես ընտանեկան նպաստի հասցեականության մեծացումն է: Այդ իսկ պատճառով կատարված փոփոխությունները հիմնականում վերբերում են ընտանեկան նպաստի համակարգին: Իրանք երկու ուղղությամբ են կատարվել՝ ընտանիքների անապահովության գնահատման կարգի փոփոխություններ և վարչարարության բարելավում:

Հիմնական փոփոխությունը կատարվել է ընտանիքի միջին ամսական եկամտի կառուցվածքում և եկամտի գործակցի հաշվարկման բանաձևում:

2012թ. հունվարից ընտանիքի միջին ամսական ամբողջական եկամտի կազմում հաշվի են առնվում նաև զինծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին տրվող ամենամյա դրամական օգնությունները, ինչպես նաև մինչև երկու տարեկան երեխայի խնամքի, ինչպես նաև զոհված՝ Հայաստանի ազգային հերոսի կամ Մարտական խաչ շքանշանով հետմահու պարգևատրված անձի ընտանիքի նպաստները:

Միաժամանակ 2012թ. հունվարից բարձրացվել է նաև կենսաթոշակի չափը:

ՀՀ կառավարության որոշմամբ ընտանիքի անապահովության գնահատման բանաձևում եկամտի գործակցի ազդեցությունը **մեղմացվել է**, որով չեզոքացվել է ընտանիքի միջին ամսական «մեծացած եկամտի» ազդեցությունը:

Նոր բանաձևով ընտանեկան նպաստի իրավունք տվող ընտանիքի միջին ամսական ամբողջական եկամուտը, համեմատած 2011թ. ի հետ՝ գրեթե կրկնապատկվել է: Այսպես.

միայնակ բնակվող կենսաթոշակառու (ոչ անժառանգ) ընտանեկան նպաստի իրավունք ձեռք է բերում 27300 դրամ կենսաթոշակ ստանալու դեպքում՝ 2011թ. 13650 դրամի դիմաց կամ 1 կենսաթոշակառու, ամուսիններ և 2 անչափահաս երեխա (13 և 10 տարեկաններ) ունեցող ընտանիքի համար՝ 62000 դրամ, 2011թ. 31000 դրամի դիմաց:

Այս փոփոխությունների արդյունքում ցածր աշխատավարձ ունեցող ընտանիքները նույնպես ձեռք են բերում ընտանեկան նպաստի իրավունք առավելապես երեխա ունեցող ընտանիքները:

Սա համահունչ է նախորդ տարվա ընթացքում գրանցված ինֆլյացիային և աղքատության մակարդակի բարձրացմանը: Միաժամանակ միջոցառումն ունի հակակոռուպցիոն բնույթ: Հաշվի առնելով նախորդ տարիների ընթացքում համակարգում աշխատելու փաստը կամ ստացած աշխատավարձի չափը թաքցնող անձանց առկայությունը, որոնք հայտնաբերվում էր նախարարության կողմից կատարած տարբեր տեղեկատվական բազաների համադրման միջոցով, այս քայլը հնարավորություն է տալիս ցածր աշխատավարձ ունեցող աղքատ ընտանիքներին՝ ընդգրկվել համակարգում՝ առանց դիմելու զարտուղի ճանապարհների:

Պետական նպաստների նշակաման և վճարման գործընթացի վարչարարության բարելավմանն ուղղված փոփոխությունները վերաբերում են նախ և առաջ այն հանգամանքին, որ 2012թ. ավելացել են այն տվյալների թիվը, որոնք որևէ պետական նպաստի իրավունքի իրացման համար ընդունվում են դիմողի հայտարարությամբ, իսկ դրանց հավաստիությունը ստուգվում է առցանց եղանակով ձեռք բերված տվյալով:

Մասնավորապես, հարկ է նշել, որ եթե 2011թ. առցանց եղանակով միայն ՀՀ ոստիկանության բնակչության պետական ռեզիստրի տեղեկանք ստորաբաժանումներից էր ստացվում բնակչության (կամ ընտանիքի կազմի) մասին տվյալը, ապա 2012թ. առցանց եղանակով ստացվում են նաև ՀՀ ԿԱ անշարժ գույքի կարաստրային գույն եկամտի մասին տվյալները: Ընտանիքի ունեցած հողատարածքի մակերեսի, տեսակի և դրա կադաստրային գույն եկամտի մասին տվյալները: Նշված երկու տվյալն օգտագործվում է անմիջականորեն սոցիալական ծառայությունների տարածքային մարմինների (այսուհետ՝ ՄՕՏՍ) կողմից՝ իրենց առցանց հարցմանը տրված պատասխանի ձևով:

Առցանց են ստացվում նաև տվյալներ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունից, ՀՀ ԿԱ ոստիկանության ՀՀ ճանապարհային ոստիկանությունից և ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման և իրավաբանական անձանց պետական ռեզիստրի գործակալություններից ամսական պարբերակա- նությամբ, «Նորք» ՏԿԿ ՓԲԸ-ի կողմից, ուր իրականացվում են տարբեր տեղեկատվական բազաների տվյալների կենտրոնացված համադրումներ, դրանց արդյունքներով ձևավորված ցուցակները տրամադրվում են ՄՕՏՍ-ներին, որոնք աշխատում են այդ ընտանիքների հետ՝ կրկին ուսումնասիրում նրանց սոցիալ-տնտեսական պայմաններն ու առաջարկություններ կապայցանում ընտանեկան նպաստի իրավունքի կապակցությամբ:

Ընտանեկան նպաստի ծրագրում արված փոփոխություններն իրենց արտահայտությունն են գտել ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված և ընտանեկան նպաստի իրավունք ձեռք բերած ընտանիքների, նաև նպաստի իրավունք ձեռք բերած ընտանիքների թվում երեխա ունեցող ընտանիքների թվի հարաբերակցություններում: Այսպես, ստորև ներկայացվում է փոփոխությունների դինամիկան.

**Աղյուսակ 1. Ընտանեկան նպաստը ՀՀ-ում 2008-2012թթ.**

	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.
Հաշվառված ընտանիքներ (% ՀՀ ընտանիքների թվից)	21.54	19.16	17.11	14.91	16.04
Նպաստառու ընտանիքներ (% հաշվառված ընտանիքների թվից)	73.25	73.4	78.77	78.94	80.3
Նպաստառու ընտանիքներ (% ՀՀ ընտանիքների թվից)	15.77	14.0	13.50	11.77	12.88
Երեխա ունեցող ընտանիքներ (% նպաստառու ընտանիքներից)	76.34	81.19	78.28	78.07	77.51
ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ (մլրդ)	29.388	32.324	31.022	35.497	37.105
Նպաստառու ընտանիքների թիվ	121160	107493	105005	91575	96309
Նպաստի միջին չափ (դրամ)	21100	23560	26850	26850	29350

2012թ. շարունակվել է ընտանեկան նպաստի համար նախատեսված ֆինանսական միջոցների ուղղումն առավել աղքատ ընտանիքներին, առավելապես երեխա ունեցող ընտանիքներին, մասնավորապես բազմազավակ ընտանիքներին, հաշվի առնելով նաև ընտանիքի բնակչության վայրը՝ բարձր լեռնային կամ սահմանամերձ բնակավայրեր: Ընտանեկան նպաստի չափը որոշվում է նպաստի բազային մասին ավելացնելով ընտանիքի մինչև 18 տարեկան յուրաքանչյուր անդամի (երեխայի) համար տրվող ավելումը, որի չափը տարբերակվում է ելնելով տվյալ ընտանիքի անապահովության միավորից, ընտանիքի բնակչության վայրից, ինչպես նաև ընտանիքում երեխաների թվից:

Ըստ անապահովության միավորի՝ հավելման չափերը տարբերակվում են երեք մակարդակով՝ առաջինը՝ 30.01-35.00 անապահովության միավորների տիրույթ, երկրորդ մակարդակը՝ 35.01-39.00, և երրորդը՝ 39.01 և ավելի: Այս տիրույթներում հավելման չափերը միմյանցից տարբերվում են 500 դրամով՝ որքան բարձր է անապահովության միավորը, այնքան բարձր է հավելման չափը: Անապահովության միավորների յուրաքանչյուր տիրույթում հավելման չափը նույնպես տարբերակվում է. սահմանամերձ, ինչպես նաև բարձր լեռնային բնակավայրերում բնակվող ընտանիքի երեխայի համար տրվող հավելումը 500 դրամով ավելի է տվյալ տիրույթի համար սահմանված հավելման չափից, իսկ եթե ընտանիքում երեխաների թիվը 4 և ավելի է, ապա նրանցից յուրաքանչյուրի համար տրվող հավելման չափը բարձր է ևս 1000 դրամով:

2012թ. բազային նպաստի չափը սահմանվել է 16000 դրամ՝ 2011թ. 13500 դրամի դիմաց: 2012թ. ամբողջ ընթացքում հավելման սահմանված չափերը տատանվում են 5500 դրամից մինչև 8000 դրամ: Ընտանիքի կազմում երեխա չունեցող ընտանիքի նպաստի չափը կազմում է 16000 դրամ, իսկ երեխա ունեցող ընտանիքի նպաստի չափը պայմանավորվում է ընտանիքի անապահովության միավորով, երեխաների թվով և բնակչության վայրով: 2012թ. ընթացքում ընտանեկան նպաստի միջին ամսական չափը կազմել է 29350 դրամ՝ 2011թ. 26850 դրամի փոխարեն:

«Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով ընտանեկան նպաստի համակարգում սահմանվել են միանվագ օգնության նշանակման հստակ հիմքեր՝ ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանիքում երեխայի ծննդյան, երեխայի առաջին դասարան ընդունվելու և ընտանիքի անդամի (թե՛ կենսաթոշակառու, աշխատող, ինչպես նաև առնվազն մեկ տարվա ապահովագրական ստաժ ունեցող գործազուրկ չէ) մահվան դեպքում՝ հուղարկավորության:

Ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանիքում երեխայի ծննդյան միանվագ օգնության չափը սահմանվել է 50 հազար դրամ, երեխայի առաջին դասարան ընդունվելու համար միանվագ օգնության չափը՝ 25 հազար դրամ, իսկ ընտանիքի անդամի մահվան դեպքում՝ հուղարկավորության միանվագ օգնության չափը՝ 50 հազար դրամ: 2012թ. ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանիքներին միանվագ դրամական օգնություն է տրվել երեխայի ծննդյան կապակցությամբ՝ 4610 ընտանիքի, երեխայի առաջին դասարան ընդունվելու կապակցությամբ՝ 9366 ընտանիքի, ընտանիքի անդամի մահվան դեպքում՝ 124 ընտանիքի:

Համակարգում հաշվառված, սակայն ընտանեկան նպաստի իրավունք չունեցող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքի կարճատև ֆինանսական խնդիրները լուծելու նպատակով՝ ՄՕՏՍ-ն սոցիալական աջակցության խորհրդի առաջրկությամբ կարող է տվյալ ընտանիքին նշանակել հրատապ օգնություն՝ եռամսյակով: Հրատապ օգնություն նշանակելու հարցը կարող է քննարկվել յուրաքանչյուր եռամսյակ և ընդունվել որոշում հրատապ օգնությունը նշանակելու կամ մերժելու մասին: Հրատապ օգնության չափը սահմանվում է բազային նպաստի չափին հավասար, այսինքն 2012թ. համար՝ 16000 դրամ: 2012թ. հրատապ օգնություն են ստացել միջինում 9094 ընտանիք:

**Երեխայի ծննդյան միանվագ նպաստ**

Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը 2009թ.-ից տարբերակվել է պայմանավորված ընտանիքում ծնված երեխայի թվով: Ընտանիքում ծնված առաջին և երկրորդ երեխաների համար այն սահմանվել է 50 հազար դրամ, իսկ երրորդ և հաջորդող յուրաքանչյուր երեխայի համար 430 հազար դրամ: 2012թ. դրանք մնացել են նույն չափով: Ստորև ներկայացվում է ըստ տարիների երեխայի ծննդյան կապակցությամբ նպաստ ստացած անձանց թիվը:

**Աղյուսակ 2. Երեխայի ծննդյան կապակցությամբ միանվագ նպաստ ստացած անձանց թիվը և ֆինանսական միջոցները**

Տարիներ	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.
<b>Օնվածներ (ՀՀ-ում)</b>	44466	44810	43340	42033
<b>Նպաստառուներ</b>	45823	43033	38724	43449
<b>Ֆինանսական միջոցներ (հազ.դրամ)</b>	5,067,585.0	4,719,455.0	4,271,800.0	4,561,930.0

**Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ**

«Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի համաձայն մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի իրավունք ունի ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող ծնողը: Տարիներ շարունակ նպաստի այս տեսակի չափը շատ ցածր էր՝ 3000 դրամ, որը 2009թ. հունվարի 1-ից բարձրացվեց 6 անգամ՝ այն հավասարեցնելով 18000 դրամի: Նպաստի չափի այդ բարձրացմամբ է հիմնականում պայմանավորված նպաստառուների թվի զգալի աճը:

**Աղյուսակ 3. Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ ստացող նպաստառուների թիվը և նպաստների վճարմանը հատկացված ֆինանսական միջոցները 2010-2012թթ.**

Տարիներ	2010թ.		2011թ.		2012թ.	
	Նպաստառուներ (երեխա)	ֆինանսական միջոցներ (հազ. դրամ)	Նպաստառուներ (երեխա)	ֆինանսական միջոցներ (հազ. դրամ)	Նպաստառուներ (երեխա)	ֆինանսական միջոցներ (հազ. դրամ)
<b>ընդամենը</b>	8058	2,568,462.0	10777	2,923,974.0	11299	3,004,000.0

Վերջին երեք տարիների ընթացքում այս երկու նպաստների համար նախատեսված ֆինանսական միջոցների կտրուկ աճը պայմանավորվել է ինչպես նպաստների չափերի բարձրացմամբ, այնպես էլ նպաստառուների թվի աճով: Ընդ որում, մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի իրավունք ունեցող ծնողների թվի աճը կարելի է ինչ որ տեղ բացատրել նաև տնտեսական ճգնաժամով, մասնավորապես՝ կրճատումներից խուսափելու հնարավորություն է տալիս (խնամքի արձակուրդում գտնվելն առնվազն երեք տարով կրճատումից ազատում է):

Միաժամանակ կարևորվում է սոցիալական ծառայությունները փաթեթով տրամադրելու խնդիրը: **Ինտեգրված սոցիալական ծառայությունների** տրամադրումը միջոց է սոցիալական ծառայությունների որակը, մատչելիությունը բարձրացնելու, դեպի հաճախորդները կողմնորոշելու, դրանց գնահատման և մշտադիտարկման, ինչպես նաև ամբողջ գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու համար: Նշված համակարգին անցնելու գործընթացը բավականին երկարատև է, այն պետք է իրականացվի աստիճանաբար և առնչվում է կառավարման ոլորտի տարբեր ճյուղերի: Համակարգի ներդրման համար հարկ է իրականացնել իրավաստեղծ ծավալուն աշխատանք, հստակեցնել յուրաքանչյուր օղակի լիազորությունների շրջանակները, ինչպես նաև համատեղ աշխատանքի եզրերը, մշակել մեխանիզմներ, որանք նորմացույցներ և այլն:

Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման նպատակով ընդունվել է ՀՀ կառավարության 2012թ. հուլիսի 26-ի N 952-Ն որոշումը, որով հաստատվել է ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի (այսուհետ՝ համակարգ) ներդրման ծրագիրը, նախատեսվել է ՀՀ Արարատի մարզում իրականացնել ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման փորձնական ծրագիրը:

Համակարգի ներդրումը ենթադրում է ՀՀ-ում ձևավորել համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններ, որոնցում տեղակայվելու են սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինները՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության սոցիալական ապահովության ապահովության բաժինները, զբաղվածության տարածքային (մարզային) կենտրոնները, բժշկասոցիալական փորձաքաննական հանձնաժողովները, ՀՀ մարզպետարանների (Երևանի, Գյումրու, Վանաձորի, Արարատի և Ջերմուկի քաղաքապետարանների) սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինները: Նշված միջոցառումն իրականացնելու նպատակով ՀՀ կառավարության որոշումներով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն են ամրացվել շենքեր, շինություններ (Բաղրամյանի, Վարդենիսի, Ճամբարակի, Վանաձորի, Հրազդանի, Չարենցավանի, Եղվարդի, Արթիկի, Գյումրիի, Մեղրու, Լոյսներեյանի, Եղեգնաձորի և Աջափնյակի տարածաշրջաններում) կամ կնքվել են անշարժ գույքի օգտագործման անհատույց անժամկետ պայմանագրեր համապատասխան համայնքի (Երևան, Արարատ, Արտաշատ, Վեդի, մասիսի, Արմավիր, Մարալիկ, Առցք) ղեկավարի հետ: Նախատեսվում է ՀՀ Արարատի մարզում՝ 2012թ. սեպտեմբերի 1-ից սկսված, ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման փորձնական ծրագրի արդյունքներով մշակել և ՀՀ կառավարություն ներկայացնել համակարգի ներդրումն ապահովող իրավական ակտերի նախագծերը:

- ստեղծել ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի տեխնիկական տեսական բազան.
- ձևավորել սոցիալական պաշտպանության ոլորտի տեղակատվական միասնական շտեմարան (տեղեկատվական ինտեգրում)՝ ապահովելով տեղեկատվության ինքնաշխատ փոխանակումը.
- կիրառել «մեկ պատուհանի» սկզբունքը
- սկսել սոցիալական ծառայություններ տրամադրող մարմինների (կազմակերպությունների) աշխատողների համատարած (տոտալ) վերապատրաստումները:

**Աղյուսակ 4. 2009-2012թթ. ընտանեկան նպաստի բազային մասի, հավելումների, միանվագ դրամական օգնությունների չափեր**

	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.	
միանվագ դրամական օգնություն, արդ թվում՝					
Երեխային ծննդից	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.	
Երեխային ծննդից	58000	58000	58000	58000	
Երեխային ծննդից	35000	35000	35000	35000	
Երեխային ծննդից	42000	42000	42000	42000	
Երեխային ծննդից	50000	50000	50000	50000	
Ֆինանսական միջոցներ / Գրքի դրամ	32,324	31,022	35,497	37,105	
Կնքված նպատ	3300	3300	3300	3300	
Երեխատուր. վերադարձի (պայմանագրի ընտանիք)	63000	63000	63000	63000	
Երեխատուր. ընտանիքներ (պայմանագրի ընտանիք)	114000	110700	110159	110159	
Երեխատուր. ընտանիքներ (պայմանագրի ընտանիք)	187,492	185805	225,75	26589	
Երեխատուր. ընտանիքներ	8000	8000	8000	8000	
Յուրաքանչյուր մինչև 2 տարեկան երեխայի համար ստացվող նպաստ	բ/լ և ս/մ բնակավայրերում և բազմազգայակ ընտանիք	7000	7000	7000	7000
	բ/լ և ս/մ բնակավայրերում	6000	6000	6000	6000
	բազմազգայակ ընտանիք	7000	7000	7000	7000
	բ/լ և ս/մ բնակավայրերում	6500	6500	6500	6500
	բ/լ և ս/մ բնակավայրերում բազմազգայակ ընտանիք	7500	7500	7500	7500
	բազմազգայակ ընտանիք	6500	6500	6500	6500
	բ/լ և ս/մ բնակավայրերում	7500	7500	7500	7500
	բ/լ և ս/մ բնակավայրերում	7000	7000	7000	7000
	բ/լ և ս/մ բնակավայրերում բազմազգայակ ընտանիք	8000	8000	8000	8000

**4. Սոցիալական պաշտպանություն  
Հաշմանդամներ և տարեցներ**

Ելնելով ՄԱԿ-ի 2006թ. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի և «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2006-2015 թվականների ռազմավարության» դրույթներից, 2012թ. ընթացքում շարունակվել են աշխատանքները հաշմանդամներին հասարակություն ներառելու ուղղությամբ:

Հաշմանդամների սոցիալական պաշտպանության բնագավառում իրականացվել են միջոցառումներ նպատակաուղղված հանրապետությունում հաշմանդամների սոցիալական ներառման, հավասար իրավունքների ու հավասար հնարավորությունների ապահովման, հասարակական կյանքի բոլոր բնագավառներում հաշմանդամների համար մատչելի միջավայրի ստեղծման, նրանց բժշկասոցիալական վերականգնման, կրթական ու զբաղվածության ծրագրերի իրականացման, պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաներով ապահովման և այլ ծառայությունների տրամադրման ուղղությամբ:

Վերը նշված կոնվենցիայի և Եվրոպայի խորհրդի «Հաշմանդամների իրավունքների և հասարակության կյանքում նրանց լիարժեք մասնակցության խթանման 2006-2015թթ. Եվրոպայում հաշմանդամների կյանքի որակի բարելավման մասին» գործողությունների ծրագրի դրույթներին համապատասխան, մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետությունում Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը կարգավորում է հաշմանդամության սահմանման, հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական, բժշկական և մասնագիտական վերականգնման, հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի միջավայրի ապահովման, նրանց կրթության, աշխատանքային գործունեության, առողջության պահպանման, ինչպես նաև հասարակական կյանքում բոլորի հետ հավասար մասնակցության համար անհրաժեշտ սոցիալական, իրավական և տնտեսական նվազագույն երաշխիքների հետ կապված իրավահարաբերությունները:

Բժշկասոցիալական փորձաքննության գործընթացի կանոնակարգման, բժշկասոցիալական փորձաքննական մարմինների գործունեության վերահսկելիության և իրականացվող աշխատանքների թափանցիկության ապահովման համար փոփոխություններ և լրացումներ են կատարվել հետևյալ իրավական ակտերում.

1) «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 2-ի N276-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2012թ. դեկտեմբերի 6-ի թիվ 1633-Ն որոշում,

2) «Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի N 780-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2012 թ. դեկտեմբերի 6-ի N 1592-Ն որոշում,

3) «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 14-ի N 1822-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» 2012թ. դեկտեմբերի 6-ի N 1632-Ն որոշում,

4) «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 14-ի N1821-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2012թ. դեկտեմբերի 6-ի N 1631-Ն որոշում:

2012թ. մայիսի 31-ի N684-Ն որոշմամբ հստակեցվել են նաև տարբեր ախտորոշումների ժամանակ հաշմանդամության սահմանման ժամկետները:

ՀՀ կառավարության 2012թ. հուլիսի 19-ի N948-Ն որոշմամբ՝ լսողության խնդիրներ ունեցող մինչև 18 տարեկան երեխաներին և 18-ից մինչև 30 տարեկան հաշմանդամություն ունեցող անձանց կտրամադրվեն եվրոպական արտադրության թվային և անալոգային լսողական սարքեր պետական հավաստագրերի հիման վրա, ինչը հնարավորություն կտա հաշմանդամին ձեռք բերել իրեն համապատասխան լսողական սարք, իսկ գործընթացը կդարձնի առավել բաց և մրցակցային:

ՀՀ կառավարության 2012թ. սեպտեմբերի 27-ի N39-Ն արձանագրային որոշմամբ ընդունվել է «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2013թ. տարեկան ծրագիրը և միջոցառումների ցանկը»:

2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հանրապետությունում հաշվառված է 186384 հաշմանդամ, որից 8078-ը երեխա: Հաշմանդամություն ունեցող անձանց 67%-ը աշխատանքային տարիքի են, որոնցից զբաղված է միայն 8-9%-ը:

2012թ. ընթացքում առաջին անգամ փորձաքննվել է 18208 անձ, որից հաշմանդամ են ճանաչվել 16446-ը՝ 90.3 %, հաշմանդամ չեն ճանաչվել 1762-ը՝ 9.7%: Նրանցից 4.7%-ն սահմանվել է հաշմանդամության 1-ին խումբ, 33.2%-ին՝ 2-րդ խումբ, 56.0%-ին՝ 3-րդ խումբ, իսկ 6.1%-ին՝ «հաշմանդամ երեխա» կարգավիճակ:

2012թ. բժշկասոցիալական փորձաքննության մարմինների կողմից փորձաքննվել է 74648 մարդ, որից 3179-ը՝ մինչև 18 տարեկաններ: Նրանց մեջ վերափորձաքննվածների թիվը կազմում է 56536 մարդ (2000-ը՝ մինչև 18 տարեկան): Փորձաքննվածներից հաշմանդամ են ճանաչվել 71549 մարդ (95.8%):

2012թ. ընթացքում բժշկասոցիալական և հոգեկան առողջության վերականգնողական բուժում է ստացել 979 անձ, հաշմանդամներն ու սոցիալապես անապահով անձինք ապահովվել են պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաներով՝ 16400 ընդհանուր քանակով, այդ թվում՝ տրամադրվել է լսողական սարք՝ 1351 հատ, որից 218-ը՝ Եվրոպական արտադրության, հաշմանդամի նստասայլակ՝ 390 հատ, վերին և ստորին վերջույթների պրոթեզներ՝ 852, սեղմիրան՝ 697, աղեկապ՝ 254, օրթեզ՝ 364, սուպինատոր՝ 694, ռեկլինատոր՝ 10, հենակ՝ 1470, ձեռնափայտ՝ 662, օրթոպեդիկ կոշիկ՝ 1522, պրոթեզի կոշիկ՝ 2253, կրծագեղձի պրոթեզ՝ 560, փոքր տրամաչափի սայլակ 5, ծնկակալ 5, քայլակ 157, կատարվել է պարագաների վերանորոգում՝ 1217 հատ, ձայնաստեղծ սարք ստացել է 100 հաշմանդամ, 90 հաշմանդամի կատարվել է աչքի պրոթեզավորում, տրվել են լսողական սարքի ներդիրներ՝ 200 հատ (100 երեխայի): Տեսողությունից 10-ը հաշմանդամ անցել են «Արև» համակարգչային ծրագրի ուսուցման դասընթացներ, որոնց տրամադրվել են համակարգիչներ: Տպագրվել են բրայլյան տառատեսակով գրքեր, տետերեր, «Բյուլետեն» ամսագիրը, ձայնագրվել են «Խոսող» գրքեր: Իրականացվող բոլոր միջոցառումներն ուղղված են հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանը՝ ապահովելու նրանց լիարժեք մասնակցությունը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում:

Տարեցների հիմնահարցերի բնագավառում պետական քաղաքականության հիմնական նպատակն է միայնակ և խնամքի կարիք ունեցող տարեց, անօթևան մարդկանց կյանքի որակի բարձրացումը: ՀՀ կառավարության 2012թ. օգոստոսի 2-ին թիվ 31 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «Բնակչության ծերացման հետևանքներից բխող հիմնախնդիրների լուծման և տարեցների սոցիալական պաշտպանության ռազմավարությունը»:

**• Տարեցներին շուրջօրյա խնամքի ծառայություններ**

Միայնակ տարեցներին և հաշմանդամներին շուրջօրյա խնամքի ծառայություններ են մատուցվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության գործող չորս տուն-ինտերնատներում՝ Երևանի թիվ 1, Նորքի, Վարդենիսի նյարդահոգեբանական և Գյումրու տարեցների և հաշմանդամների տուն-ինտերնատներում: Տուն-ինտերնատներում խնամվող 1090 կենսաթոշակառուները գտնվում են պետության լրիվ խնամքի ներքո:

**• Տնային պայմաններում միայնակ տարեցների սոցիալական սպասարկում**

Այս ծրագրով նախատեսված միայնակ տարեցներին տնային պայմաններում խնամքի և սոցիալական սպասարկման ծառայություններ են մատուցել նախարարության համակարգում գործող «Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ը, որը Երևան քաղաքում սպասարկել է 1500 միայնակ ծեր ու հաշմանդամ կենսաթոշակառուի:

**• Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ**

Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատին կից հոգեկան առողջության ցերեկային կենտրոնում խնամք և սոցիալական սպասարկման ծառայություն են ստացել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող 50 անձ և նրանց ընտանիքների անդամներ:

- **Անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայություններ**  
 Թիվ 1 տուն-ինտերնատին կից անօթևան մարդկանց ժամանակավոր կացարանում սպասարկվել է 60 մարդ:
- **ՀՀ մարզերում միայնակ տարեցներին, հաշմանդամներին տնային պայմաններում և տարեցների ցերեկային խնամքի կենտրոններում սոցիալական սպասարկում**

Պետական աջակցություն է ցուցաբերվել «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ին հանրապետության 8 մարզերում 4200 միայնակ տարեց ու հաշմանդամ կենսաթոշակառուի տնային պայմաններում և ցերեկային կենտրոններում սպասարկող աշխատողների աշխատավարձը փոխհատուցելու համար:

- **Վանաձորի տարեցների տանը խնամվողներին շուրջօրյա խնամք և սոցիալական սպասարկում**  
 Վանաձորի տարեցների տանը խնամվել է 55 կենսաթոշակառու:
- **«Բռնադատված քաղաքացիներին պատճառված վնասի դիմաց միանվագ դրամական փոխհատուցում»**

Համաձայն «Բռնադատվածների մասին» ՀՀ օրենքի, բռնադատված քաղաքացիներին, նրանց կրած վնասի դիմաց միանվագ տրամադրվում է դրամական փոխհատուցում հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի տասներկուպատիկի չափով (12000դրամ): Դրամական փոխհատուցումը տրվում է միայն մեկ անգամ և միայն բռնադատվածի կարգավիճակ ունեցող անձին:

**Երեխաներ**

Հայաստանի Հանրապետությունում երեխաների սոցիալական պաշտպանության ոլորտի հիմնական նպատակը երեխաների սոցիալական պաշտպանությունն ու հասարակության մեջ նրանց ինտեգրումն է և կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների կյանքի որակի բարելավումը: Բարեփոխումների, ՀՀ կառավարության որոշած քաղաքականության հիմնական գաղափարախոսությունը երեխայի խնամքն ու դաստիարակությունն ընտանիքում ապահովելն է՝ մանկատներում և երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններում երեխաների թվի նվազեցման և այդ հաստատություններ երեխաների հոսքի կանխարգելման միջոցով: Բարեփոխությունների իրականացման, ինչպես նաև ՀՀ-ում երեխաների իրավունքների պաշտպանության ազգային ծրագիր մշակելու նպատակով 2012թ. մարտի 20-ին ընդունվել է «Միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու և անհատական կազմը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի N 232-Ս որոշումը:

ՀՀ կառավարության կողմից 2012 թվականի դեկտեմբերի 27-ին հաստատվել է «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագրի միջոցառումների ժամանակացույցը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 18-ի N 1745-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1694-Ն որոշումը:

Նախարարության համակարգի 7 մանկատներում իրականացվել է առանց ծնողական խնամքի մնացած 750 երեխաների խնամք, որից 520-ը՝ մասնագիտացված մանկատներում, ինչպես նաև սոցիալապես անապահով ընտանիքների 735 երեխաների խնամք՝ երեխաների խնամքի ու պաշտպանության գիշերօթիկ 8 հաստատություններում:

Իրականացվող քաղաքականության արդյունքում պետական մանկատներում պետական մանկատներում խնամվող երեխաների թվի կրճատման արդյունքում պետական մեկ մանկատուն վերակազմակերպվել է մասնագիտացված մանկատան՝ ՀՀ կառավարության 2012թ. հունիսի 7-ին հաստատվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 23-ի N 210-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 716-Ն որոշումը: Համաձայն վերոնշյալ փոփոխության ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Մարի Բզմիրյանի անվան մանկատունը» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպվել է Մարի Բզմիրյանի անվան մասնագիտացված մանկատան, որի գործունեության առարկան դարձել է 0-18 տարեկան հաշմանդամ երեխաների սոցիալ-հոգեբանական վերականգնողական աշխատանքների իրականացումը, նրանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, նյութական ու կենցաղային պահանջներին բավարարումը, խնամքի և դաստիարակության ապահովումը, ուսուցման և բժշկական օգնության կազմակերպումը:

2012թ. դեկտեմբերի 20-ին հաստատվել է «Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարության «Երևանի «Զատիկ» մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թ. հունվարի 23-ի N209-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N1659-Ն որոշումը, համաձայն որի «Երևանի «Զատիկ» մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպվեց երեխաների աջակցության կենտրոնի:

Վերակազմակերպման արդյունքում Երևանի «Զատիկ» աջակցության կենտրոնը իրականացնում է՝

- կյանքի դժվարին իրավիճակում գտնվող անօթևան 3-18 տարեկան երեխայի մինչև 6 ամիս ժամկետով շուրջօրյա խնամքի ապահովումը,
- Երևան քաղաքի կյանքի դժվարին իրավիճակում գտնվող 6-18 տարեկան երեխայի ցերեկային խնամքի ապահովումը:  
 Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների սոցիալական պաշտպանության միասնական մոտեցումն ապահովելու, երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի Հայաստանում երեխաների պաշտպանության համակարգը կառավարելու, դիտարկելու և համակարգելու գործառնություններն ուժեղացնելու, ոլորտի ռազմավարության վերանայման նպատակով 2012թ. ՀՀ կառավարության կողմից հաստատվել են հետևյալ իրավական ակտերը.
- 2012թ. դեկտեմբերի 28-ի «Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի կանոնադրությունը և անհատական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2005 թվականի հոկտեմբերի 28-ի N835-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ վարչապետի թիվ 1295-Ն որոշումը,
- 2012թ. հուլիսի 20-ի ՀՀ կրթության և գիտության նախարարի թիվ 726-Ա և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի թիվ 67-Մ/1/ «Հատուկ կարիքներ ունեցող երեխաների համար հատուկ ուսումնական հաստատություններում միասնական կառավարում և սոցիալական պաշտպանություն ապահովելու գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» համաձայն էր հրամանը: